Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՍԱՐԿԱՎԱԳԻ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ուսանողության կողմից պատրաստված երեկույթ՝ նվիրված Սբ. Ստեփաննոսի տոնին: Երեկույթին ներկա էին Մայրավանքի միաբանները, ուսանողությունը և հյուրեր: Հանդիսությունը նախագահում էր Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

Այն սկսվեց Տերունական աղոթքով: Ապա Ճեմարանի սաները, Ռ. Շարբաթյանի ղեկավարությամբ, կատարեցին Հոգևոր Ճեմարանի քայլերգը: Բացման խոսք ասաց Զ լսարանի սան, ուրարակիր Վաղարշակ Օատուրյանը: «Գործք առաքելոցի» այն հատվածը, որը նվիրված է Ս. Ստեփաննոսի քարկոծմանը, ընթերցեց նույն լսարանի սան, ուրարակիր Սահակ Գասպարյանը: Իսկ Արտակ սրկ. Սահակյանը հանդես եկավ «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց» բանախոսությամբ, որում շահեկան տեղեկություններ հաղորդվեցին Լամբրոնացու և Արճիշեցու «սարկավագ» բառի ստուգաբանության, Տաթևացու՝ Ս. Ստեփաննոսին նվիրված քարոզի մասին:

Բանախոսությունից հետո Գևորգյան Հոգևոր Ճեմարանի երգչախումբը կատարեց «Նախասարկավագ» շարականը: Վահան Թեքեյանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունն ասմունքեց Ա լսարանի սան Էդիկ Հակոբյանը: Ապա նույն լսարանի սան Զոհրապ Կարապետյանի դաշնամուրային կատարմամբ հնչեց «Էքսպրոմտ-ֆանտազիա» ստեղծագործությունը, որին հաջորդեց Զ լսարանի սան Միքայել սրկ. Միքայելյանի բանախոսությունը՝ «Սբ. Ստեփաննոսի եկեղեցիները» թեմայով: Ներկայացվեց Ստեփաննոսի անունը կրող երեք վանքերի և տասնմեկ եկեղեցիների պատմությունը, որոնք կա՛մ առանձին եկեղեցիներ են, կա՛մ եկեղեցիներ, որոնք գտնվում են վանական համալիրներում: Այնուհետև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի երգչախմբի կատարմամբ հնչեց «Ստեփաննոս քաղցրիկ տատրակ» շարականը:

Որպես ամփոփում, իր օրհնության խոսքն ասաց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը՝ երախտագիտության ու գնահատանքի խոսք ուղղելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությանը՝ ներկաներին այս գեղեցիկ ապրումների պահը պարգևելու համար: Գարեգին արքեպիսկոպոսը խոստովանեց, որ ուսանողության հետ հանդիպելու, շփվելու, զրուցելու և նրանց կյանքի մեջ խորամուխ լինելու կարոտ է զգում, և այդ բացը ինչ-որ չափով լրացնելու է գալիս այս հանդիսությունը: Սրբազանը հույս հայտնեց, որ Ս. Ստեփաննոսի հիշատակը նշելը միաբանության և ուսանողության կյանքում միայն ավանդական տոնախմբություն չպետք է լինի, այլ նաև՝ ապրում:

Անդրադառնալով այն իրողությանը, որ Ս. Ստեփաննոսի տոնը նախ և

առաջ սարկավագաց տոնն է, Սրբազանը շնորհավորեց բոլոր սարկավագներին և ուսանողներին էլ նրանց հետ, կոչ արեց հայացքներն ուղղել իրենց իսկ հոգիներից ներս և տեսնել, թե որքանով է Ս. Ստեփաննոսն արտացոլվում այնտեղ՝ իր էությամբ, իր հավատքով և իր գործով՝ այս մասին ի մասնավորի ասելով. «Մեր եկեղեցին և մեր ժողովուրդը կարիք ունեն Ստեփաննոսի հոգով խանդավառ եկեղեցականների: Այսօր մեզանից նահատակություն չի պահանջվում, որովհետև Քրիստոսի եկեղեցու նկատմամբ հալածանք չկա, այլ ակնկալվում է այն ծառայությունը, այն պատրաստակամությունը, այն նվիրումն ու հավատքը, որն ուներ Ստեփաննոսը: Մաղթում եմ, որ ձեր հայացքի առջև միշտ Ստեփաննոս Նախասարկավագի կեպարը, նրա կյանքն ու գոհաբերությունն ունենաք, և նվիրումն ու ծառայասիրությունը առաջնորդող գաղափարներ լինեն ձեր կյանքում: Միայն Ստեփաննոսի հավատքով ու կյանքով ապրելով կարժանանանք մեր եկեղեցու արժանի սպասավորները և մեր ժողովրդի արժանի զավակները կոչվելուն»:

Ավարտելով խոսքը, Գարեգին արքեպիսկոպոսը մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնեց Ճեմարանի տեսչությանը և մաղթեց, որ Աստծո օրհնությունը լինի բոլորի վրա:

Հանդիսությունն ավարտվեց «Հայր մեր»-ի երգեցողությամբ և Փոխանորդ Սրբազան Հոր «Պահպանիչ»-ով:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դ լսարանի սան